



գրով Տիգրան պարզապէս Տրդատի տեղակալն էր, որ իր անիրաւատիւ վարմունքին պատճառաւ ժամանակաւորապէս կ'արգելուէր իր արքայական իրաւունքներու գործադրութենէն: Թէ՛ Կորբուզոն եւ թէ՛ կառավարութիւնը Տիգրանն անմիջապէս լքեցին, երբ Պարթեւներու հետ ծրագրուած համաձայնութեան զգալի հաւանականութիւն մը ներկայացաւ: Վերը տեսանք թէ ինչպէս Կորբուզոն արդէն ՅԱԻ գարնան՝ վերստին քաղաքականութեան հին ուղին կը մտնէր<sup>127</sup>:

Հոռոմէական կառավարութիւնն այդ միջոցին իր կուսակալը վարկաբեկած է, վասն զի իր կարծիքով վերջնական համաձայնութենէ առաջ խնդրական երկրին լքումով, նոր յարաբերութեան հոգեբանական էական նախապայման մը կը բարձուէր. սակայն Տիգրանի կամ ուրիշ հոռոմէական արքանեակի մը վերահաստատումի խնդիր չկար, մանաւանդ թէ Պետոսի հրահանգ տրուեցաւ երկիրը վերագրուել եւ նահանգի վերածել<sup>127</sup>: Բայց նա ալ, Կորբուզոնի պէս, դիտէր թէ Հոռոմ կը ձգտէր Տրդատի վերջնական ճանաչումին յանգիլ, եւ իր պարտութեան ատեն այս ծանօթութիւնը օգտագործած է եւ յայտարարած է թէ իր կառավարութիւնը Արշակունիի մը Հայաստանի վրայ թագաւորելուն հիմնական դժուարութիւններ չունի<sup>127</sup>: 62ի գարնան հոռոմէական բանակցութիւններն ալ բացայայտ կը ցուցնեն թէ պարթեւական մարտը՝ Տրդատի Հոռոմէ կախումին ձեւականութիւններու եւ անոնց միջոցով արտայայտուած հոռոմէական-պարթեւական յարաբերութիւններու համար կը մղուէր<sup>127</sup>: Հարցը այն էր թէ արդեօք Հոռոմի գերիշխանութիւնը՝ երկրին Պարթեւներու յանձնումին պատշաճ քողարկում մը միայն պէտք էր ըլլալ, թէ թագի սուշութեան ձեւականութիւններով Հոռոմի՝ Հայաստանի վրայ իշխանութեան մասնակցութիւնը՝ արեւելքի ժողովուրդներու դիւրապահ խառնուածին վրայ խորապէս պէտք էր գրուէր մուրի:

Հոռոմի կառավարութիւնն երկու կերպական տարբերութիւն մէջ իր գերակայութիւնը կ'ուզէր տեսնել ընել: Հայաստանի գրաւումը գոնէ այնքան ատեն տեւելու էր, մինչեւ որ թագապահանջը հպատակութեան ցոյցը կատարէր: Իսկ այդ հանդիսաւոր

դէպքը պէտք էր Հոռոմ տեղի ունենալ, ուր արշակունիները մինչ այն միայն իրրեւ կալանաւոր եկած էին: Այս պահանջը պարզապէս ձեւականութիւն մը համարուած է, որ ծանր դէպքի մը պարագային Հայաստանի աւատաւորին հաւատարմութեան ոչ մէկ դրաւական կու տար<sup>128</sup>: Այս կարծիքը ի վեր կը հանէ սոյն ձեւականութեան հիւսիսարեւակներուս կողմէ գնահատանքի թեւութիւնը, որ շատ յաճախ անհարին կը դարձնէ մեզի արեւելեաններու զգացումներու, հասկացողութիւնը: Երկրին դրաւումը եւ թագաւորին ուղեւորութիւնը դէպի թշնամուոյն մայրաքաղաքը, հոն հպատակութեան խոնարհ ցոյց մը կատարելու համար, այնպիսի իրողութիւններ են, որոնց նոյն ժողովուրդեան եւ անոր դրացիներու վրայ յառաջ բերած բուն տպաւորութեան վրայ մենք՝ Վերսայլի դաշինքի սերունդս՝ այլ եւս չենք կրնար տարակուսիլ: Այսպիսի պայմաններ ընդունելի ընող թշնամուոյ մը ոյժը, կը դարձաւորի փառաց պսակով մը, զոր եղծանել ի վիճակի են իշխանութեան չարաչար գործածութիւնը կամ ժամանակի երկարութիւնը միայն:

Արշակունիին Հոռոմ ուղեւորութիւնն՝ արեւելեան ժողովուրդներու վրայ իր առթիւք այս հոգեբանական ազդեցութիւնէն զատ՝ երկրորդ նպատակի մը եւս պիտի ծառայէր: Կայսրը՝ թագաւորն Հոռոմի արքունիքը գտնուած պահուն, երախտեաց ապացոյցներով առցած է եւ անոր հետ բարեկամական յարաբերութեան մէջ մտած<sup>129</sup>: Անձնական այս լաւ յարաբերութիւնը, որ իր ազդեցութիւնը պիտի ունենար մեծ արքային հետ յարաբերութիւններու վրայ ալ, քաղաքագիտական կարեւոր միջոց մըն էր. վասն զի ճիշդ արեւելքի երկիրներու մէջ, ուր բռնակալ կառավարութիւններ կը տիրեն, արքայական բարեկամութիւնները միշտ դաշնակցութեանց լաւագոյն շաղախն եղած են:

Այս խոհեմ քաղաքականութեան արդիւնք եղած է իրապէս ալ պարթեւական բարեկամութիւնը. տեսանք թէ Կորբուզոն 63ին մեծ արքային դաշնակցութիւն մը առաջարկած է<sup>130</sup>, եւ հետագայ իրադարձութեանց մէջ որոշ գծեր կը մատնանշեն թէ

128 Հոռ. Պատմ. Ե. 392 յլ. 2:  
129 Դիոն Կր. 1, 2-7. Տես Հ. Ներոն, 13:  
130 Տես յօդ. 3:

127 Տես յօդ. 3:

այդ դաշնակցութիւնը կնքուած է: Յամենայն դէպս Ներոն փորձած է, Վաղարշի հետ յարաբերութիւններն ալ այն սիրալիւր աստիճանին բարձրացնել, որու հասած էր Տրդատի յարաբերութիւնն՝ անոր Հոռոմ այցելութեան ժամանակ: Կրկին ու կրկին հրաւիրած է մեծ արքան Հոռոմ այցելելու եւ երբ այդ զգուշաւոր իշխանը պատրաստակամութիւն չցուցուց, ժամադրութեան մը խօսք առաւ, որ տեղի պիտի ունենար իր Ասիա ուղեւորութեան պարագային<sup>131</sup>:

Արշակունիին դաշնակցի բարեկամական զգացումները՝ կեսարներու վերջին շատաւիշին հանդէպ, անսահման էին եւ անոր անկումով իսկ չվերջացան<sup>132</sup>: Վեսպասիանոսի հանդէպ ալ պարթեւ արքան դաշնակցութեան վրայ՝ իրրեւ հիմնակէտը իր քաղաքականութեան, անյողող հաստատ մնաց. երբ նոր կայսրը իր դահակայութիւնէն անմիջապէս յետոյ մեծ արքային հետ յարաբերութեան մէջ մտաւ, թագաւորը 40.000 ձիաւոր մարտիկներու օգնական զուռը մը ձիաւոր մարտիկներու օգնական զուռը մը համար<sup>133</sup>: Եւ ինչպէս որ հոս ինքը ազդու մարտակցութեան մը պատրաստակամութիւնը կը ցուցնէր, նոյնպէս ալ 76ի Ալաններու յարձակումի պարագային իր հոռոմացի դաշնակցէն՝ իշխանագունի մը առաջնորդութեան տակ՝ օգնական բանակ մը պահանջած է<sup>134</sup>: Իր այս փափագին մերժումէն հանջած է<sup>134</sup>: Իր այս փափագներու բախտաջ եկած է երկու վիճակներու միջոցով: Երկրորդը կարեւորութեան առաջին պարթեւական յարաբերութեան արդեւորութիւնը:

Եթէ 64ին նոր կացութեան քաղաքական երեսը այսպէս գոհացուցիչ կարգաւորում մը գտած էր, բայց զինուորական ապահովութիւնն ալ չէր անտեսուած. 64ին Կորբուզոն ստորին Արածանուոյ վրայ այժմեան Թարբերդի մօտ իր դերարժէք Գ. Գաղղիական լեզէոնին միջնարբը մը կառուցանել տուած էր<sup>135</sup>: Իսկ 73ին հոռոմէական զուռը մը Վրաստան կը գտնուէր<sup>136</sup>: Ասոնք կը

131 Դիոն Կր. 2, տես վարը Գր. Գ. յօդ. 2:  
132 Երաւիցայէն պահանջեց Ներոնի միջոցով պատուել (տ. Հ. Ներոն, 57): Երբ 20 տարի յետոյ արեւելքի մէջ կեղծ Ներոն մը երեւան ելաւ, անոր մասին կը պատմուի. favorable eius nomen apud Parthos fuit (անդ):  
133 Տես Վեսպասիանոս, 6:  
134 Տես Dom 2, Յովսէփոս վասն Հրէական մարտի Է, 245-250:  
135 Տես վերը յօդ. 3:  
136 CIL. III, 6052:

մատնանշեն այն ամբական դրութեան երկու ծայրակէտերը, զորս Կորբուզոն խաղաղութեան կնքումէն յետոյ հաստատած էր՝ Հայաստանի աւատաւորին հաւատարմութիւնը ամէն պարագայի մէջ ապահովելու համար<sup>137</sup>: Տակիտոս կը վկայէ թէ 69ին ամբողջ հայկական սահմանին երկարութեան զոյուրութիւն ունէր այս բազմամարդ ամրոցներու զօտին<sup>138</sup>, որ ուրիշ բան չէր եթէ ոչ մեզի 59 տարիէն ծանօթ հպատակ պետութիւններէ կազմուած օղակին նոր յարաբերութեան ճարտիկ պատշաճեցումը<sup>139</sup>: Հոռոմէական ճարտիկ պատշաճեցումը, որոնք Տիգրանի իշխանական այն զուռերը, որոնք Տիգրանի իշխանութեան ժամանակ Հայաստան կը գրաւուէին, հելլենական ազդեցութեան ենթակայ դրացի պետութիւններու մէջ՝ Կոմմագենէէ մինչեւ Վրաստան՝ սահմանաբերներու շրջանին մը մէջ ամփոփուած էին: Անուանաթայի մը մէջ ամփոփուած էին: Անուանական պետութիւններուն զինուորական ուժեղացումը պարթեւ իշխանէ մը կառավարուած Հայաստանի վրայ հոռոմէական ազդեցութեան դուռը բաց պիտի պահէր:

Ուրեմն մեծ պատերազմը Հոռոմի կառավարութեան փափագին համեմատ վերջ գտած էր համաձայնական խաղաղութեան մը կնքումով: Իսկ եթէ Հոռոմի պետութեան ի նպատակ շատ կարեւոր ուժերու տեղափոխութիւն մը յառաջ եկաւ անկէ, ասոր պատճառն եղած է վրկանեան ապստամբութեան համընթացութիւնը, որ այդ վճռական վայրկեանին Արշակունի պետութիւնը տկարացուցած է:

Պարթեւական խնդրոյն ամբողջ տեւողութեան Հոռոմ վայելած է թշնամուոյն հիւսիս-արեւելեան դրացուոյն զինուորական համադրակցութեան մեծարժէք առաւելումները եւ ատնք էին դրդապատճառը, որ դար մը յետոյ Անտոնինոս Պիոսը վրկանեան հետ յարաբերութեան առաջնորդութեան<sup>140</sup>: Մինչ մեծ արքան իր բոլոր ուժերուն կը կարօտէր ապստամբութիւնը արեւելքի իր բոյնին մէջ զսպելու համար, ասդին հոռոմէական բանակը կրցաւ դիւրութեամբ Հայաստանը գրաւել եւ այդ երկրին մէջ ամբողջապէս խարխուլել:

Պարթեւական պետութեան երկու դրա-  
137 Ներոնի վերջին տարիներուն Փոքր Ասիա զանազան զինուորական ուժերու մասին տես Գր. Գ. յօդ. 1:  
138 Տակ. Պատմ. Բ. 6:  
139 Տես վերը յօդ. 2:  
140 Aur. Vict. epit ԺԵ. 4:

ցրներու համադրածակցութիւնը 58ին դաշնակցութեան մը կնքումին առաջնորդած է. վրկանեան նոր պետութեան վրայ Հոռմի տեւական պաշտպանութիւնը, որ անձուկ զինակցութեան մը նկարագրին ունէր, ազդեցիկ զէնք մըն էր Պարթեւներու դէմ: Առաջարկուած դաշինքին զինուորական, քաղաքական եւ տնտեսական առաւելութիւններն, որոնց վրայ յետոյ մանրամասնօրէն պիտի խօսինք<sup>141</sup>, հոռմէական պետութեան համար այնքան մեծ էին, որ չեմ տարակուսիր անոր կնքուելուն վրայ, թէեւ այդ մեղի եւ ոչ տեղ մը աւանդուած է:

Վրկաններու երկրին Հոռմի պաշտպանութեան ենթարկուելովն, արդէն աւգոստոսեան երեք գետերու սահմանին ծրագրերը խրամատուած էր. եւ նոր յարաբերութիւններն հոռմէական քաղաքականութիւնն ինքնաբերաբար նոր ուղիներ կ'առաջնորդէին: Վրկանեան դաշինքը եւ Հնդկաստանի վաճառականութեան Ակսումեան պետութեան կողմանէ վտանգումը՝ բռնադատած են Ներոնի կառավարութիւնն արեւելեան աշխարհակալութեան ուղին մտնելու. հրէական պատերազմը եւ արեւմուտքի ապստամբութիւնը արդեւք եղած են այդ աշխարհակալութեան արդիւնքին կատարեալ յաջողութեան:

Վրկաններու պարթեւական պետութեան անջատումին առաւելութիւններէն չզրկուելու փափազը՝ նախ սահմանած է Պարթեւական մարտին վերսկսելու ժամանակակէտը<sup>142</sup>. եւ ապա նոյն մարտին եւ խաղաղութեան դաշինքին նոր երանգաւորում մը տուած: Պարթեւ արքան 61ին իր զէնքերն Հոռմի դէմ դարձուցած էր որպէս զի ազատէինք զինքը հոռմէական սպառնացող շրջափակումէն, որ կը ձեւաւորուէր Հայաստանի գրաւումովը եւ վրկաններու դաշնակցութեամբ: Սակայն հակառակ իր Ռանդէայի յանկարծակի ձեռք բերած արդիւնքին՝ չէ յաջողած իր այս մտադրութեան մէջ: Արեւմուտքի մէջ՝ ստիպուած էր դռնախալ իր եղբոր անձին մէջ՝ իբրեւ հոռմէական հոգատար Հայաստանի, հզօրագոյն դրացի պետութեան բարեացակամութեան գօրեղ ապահովութիւն մը շահելով, իսկ արեւելքի մէջ 61ին ճանչցուած վրկանեան պետութիւնը այլ եւս կարելի չէր ջնջել:

<sup>141</sup> Տես Գլ. Բ, յօդ. 2 եւ 3:  
<sup>142</sup> Տես վերը յօդ. 2:

Հոռմէական-պարթեւական դաշնակցութիւնն ալ այս աղբրէն զիտուելով մասնաւոր նրբերանդ մը կը ստանայ. երկու արշակունիներն այժմ արդէն հոռմէական իշխանութեան շրջանակին մէջ օղակուած էին: Անոնցմէ մին՝ իբրեւ թագաւոր Հայաստանի, անմիջաբար պետական ընկերակցութեան մէջ մտած էր. միւսը՝ Վրկաններու վրայ իշխող հօրեղբորորդին՝ կայսեր հետ կապուած էր դաշնակցութեամբ մը, որ հոռմէական պաշտպանողական իշխանութեան նկարագրին ունէր, եւ այսպէս զիւրաւ կրնար նմանապէս կախումի աղբրսի վերածուել: Ուրեմն Արշակունի անունը Հոռմի անուան առջեւ խորապէս խոնարհած էր արդէն, երբ մեծ արքան ինքնին կայսեր հետ դաշնագրութիւն մը կնքեց, եւ ասով Տիգրան ալ մտաւ այն ճամբան, որու վրայէն հնար էր դայն Հոռմի պետութեան ենթարկումի առաջնորդել: Հոռմ յայտնապէս կը դիտէր դաշնակցութիւնը ամենայն բարեկամութեամբ այս ուղղութեամբ դարգացնել: Ներոնի՝ մեծ արքային ուղղած Հոռմ այցելու հրաւերը, ուր՝ որքան մարդկային յեղուկութիւնը կը զօրէր, օտար թագաւորներ կա՞մ իբրեւ հպատակ եւ կա՞մ իբրեւ զերի ընդունուած էին, առաջին քայլն էր դէպի այս նպատակը: Վաղարշ այս առաջին յարձակումը խոհեմաբար մերժած է: Սակայն Ներոնի ամբողջ հիւսիսարեւելեան քաղաքականութիւնը, որ կասկից ծովու եզրները հասնիլ կը ձգտէր, անոր ալիքներու վրայէն վրկանեան դաշնակցին հետ անմիջական հաղորդակցութիւն մը հնարաւորելու համար, դեռ միշտ կ'աշխատէր պարթեւական պետութիւնը քաղաքական եւ տնտեսական կախումի ցանցով մը պատել<sup>143</sup>: Արեւելքի մէջ յառաջացող խորացումին դէմ ծագած յեղաշրջումի բուռն շարժումը միայն, որ Ներոնի անկումին պատճառ եղաւ, այդ միջոցին Պարթեւ պետութիւնը «խաղաղական գրաւում»էն ազատած է:

Աւգոստոսի օրերէն սողին առաջին անգամ Ներոնի կառավարութիւնն էր, որ նոր տեսակէտներով անկախ արեւելեան քաղաքականութիւն մը կը հետապնդէր: Այս նոր

<sup>143</sup> Տես վերը Գլ. Բ, յօդ. 2 եւ 3: Ներոնի հիւսիս-արեւելեան քաղաքականութիւնը յամենայն դէպս Պարթեւներու անկախութեան դէմ ուղղուած էր, սակայն չունէր Սիվերի (120) եւ Ֆիցների (37) ենթադրած երեւակայական խորհուրդներն:

ընթացքին հեղինակներն ի սկզբան նոր ազդու միջոցներով հին պաշտպանողական նպատակին ձգտած են. յետոյ խնդրոյն ներքին զարգացումէն առաջնորդուած են միշտ առաւելագոյն տարածումի հնարաւորութիւններու: Դժբախտաբար մեր աղբրերներու վիճակը թոյլ չի տար մեզի նոր քաղաքականութեան վարիչ անձնաւորութիւններու հարցը դոհացուցիչ կերպով լուծելու. ամենապարզ տարրական հիմունքներէ անդին չենք կրնար անցնիլ:

Մինչեւ 62 տարին կառավարութեան ղեկավարներն էին՝ պահակազուռի պետը՝ Ափրանիոս Բուռոս<sup>144</sup> եւ կայսեր ուսուցիչը՝ Սենեկա: Իրենց անվիճելի արժանիքն է ուրեմն Պարթեւական մարտին քաղաքական այս նպատակը նշանակելը: Բուռոս՝ նորրումեան Գաղղիայի Վաղիոյէն՝ հոռմէացի ասպետ մըն էր. երբ Ագրիպպինայի վաստահութեամբ 51ին իբրեւ պրետորներու միայնակ պետ<sup>145</sup> պաշտօնի կոչուեցաւ, արդէն տասնեակ տարիներով պաշտօնավարած էր արեւելի եւ պետական վարչական ծառայութեան մէջ: Հակառակ որ Տակիտոս զինքն այս առթիւ vir egregiae militaris famae կ'որակէ, այս առթիւ արժանիքներ արժանիքներ կ'երեւայ թէ զինուորական արժանիքներ չունէր<sup>146</sup>: Պետութեան յաջող վարչութիւնը, որ Ներոնի առաջին տարիներուն պարծանքը մնացած է միշտ, կ'երեւայ այս փորձ վարչական պաշտօնէն մեծ արդիւնքն եղած է:

Այս դործնական ուժին առընթեր, իբրեւ բաժանեկից իր իշխանութեան, կը պաշտօնավարէր նրբամիտ եւ ընտիր Սենեկան. նա առաջնորդն է իր ժամանակին սերունդին, որու շողջողուն եւ հակաութիւններով լի նկարագրերը անոր գրութիւններուն եւ ոճին մէջ իրենց վճիռ պատկերացումը դրած են<sup>147</sup>: Մեծցած ազնուականութեան առաջնակարգ շրջանակներու մէջ՝ ամենանորը դրոշմով պալատական մըն էր. իր երիտաւարութեան մէկ մասն անցուցած էր մէկ մօրեղբոր մօտ, որ Եգիպտոսի փոխարքայ եղած էր<sup>148</sup>. իր մեծ նիւթական կարողու-

<sup>144</sup> Իր ծագումին եւ կենաց մասին հմտ. CIL. ԺԲ. 5842:  
<sup>145</sup> Տակ. Տ. ԺԲ. 42: Սէյանոսի անկումէն յետոյ թիկնապահներու հրամանատարութիւնն երկու հոգւոյ յանձնուած էր:  
<sup>146</sup> Տես Friedrich, Berl. phil. Wochenschr., 1914, 1343:  
<sup>147</sup> Հմտ. Norden, Kunstprosa I, 312 թ.  
<sup>148</sup> Cons. ad Helv. 19, 2:

թեան տնտեսութեամբ անդրագոյն դործնական փորձառութիւններ միտերած էր. ասոնց վրայ կը բարդուէր իշխանատենչ ուժեղ կամք մը, որու համար դործելն եւ տիրելը կենսավայելի ձեւ մըն էր<sup>149</sup>: Այս յատկութիւններով՝ շատ յարմար էր ինքնակաց զիրքի մը հզօր պահակապետին առընթեր, որու հետ, հակառակ երկարատեւ համադրածակցութեան, անձնական սերտ յարաբերութիւն մը չունէր<sup>150</sup>: Կերեւայ թէ Կղազիտսի թիւն մը չունէր<sup>150</sup>: Կերեւայ թէ Կղազիտսի կառավարութեան ժամանակ ստեղծուած պետական մէկ կարեւոր քարտուղարութիւնը ստանձնած եւ զայն միջնորդ դործածած է իր աղբրեցութեան<sup>151</sup>:

Այս երկուքը, որոնց բաժինը վարչութեան մէջ դժուար է ձգելու որոշել, հոռմէական արեւելեան քաղաքականութեան նոր դարաշրջանը սկզբնաւորած են: Պիտի տեսարանը սկզբնաւորած են իսկ զէպի նենք թէ քաղաքականութեան նոյն իսկ զէպիտասարդ Ներոնի՝ այս երկու մեծ խորհրատուներուն, որոնք 58ին, երբ վրկանեան դաշնակցութեան կոչուեցաւ, դեռ անկասկած իրենց չինքը կնքուեցաւ, զեռ անկասկած իրենց աղբրեցութեան բարձունքին վրայ էին:

Թէ 62ին՝ իրենց քաջուելէն յետոյ՝ անոնց դործն ո՞վ յառաջ վարած է, չենք կրնար նոյն ստուգութեամբ հաստատել. եւ ստիպուած ենք դոհ ըլլալ նշանակելով այն անձերու խումբը, որոնք վերջին տարիներուն մէջ կայսեր վաստահութիւնը վայելած են: Կորբուզոն տարակոյս չկայ, որ արեւելեան ինքիւրներու բանակցութիւններու մէջ առաջին ճայնն ունեցած է: Իրեն կից կարեւոր ջին ճայնն ունեցած է իր տարիներու օգնականը զեր վարած է իր տարիներու հակառակ Տի. Յուլիոս Աղեքսանդրը, որ հակառակ հրեայ ըլլալուն Եգիպտոսի փոխարքայ եղած է<sup>152</sup>: Ուրեմն Տիգրիլինոս պահակապետն էա, որ կայսեր արեւելքի ուղեւորութեան ընկերակցած է<sup>153</sup>, անշուշտ ասոնց ազդեցութեան չէ մնացած. վերջապէս կայսեր վաստահիւններէն ծանօթ են մեղի՝ կարող քաղաքագէտ Պետրոնիոս Տուրպիլիանոս<sup>154</sup> եւ Կլուպիոս Ռուփոս:

(Շարունակելի:) Թղթ. Վ. Մ. ՀԱՊՈՉԵԱՆ

<sup>149</sup> Հ. Ներոն 60:  
<sup>150</sup> Երբեք իր պաշտօնակցի մասին ջերմ արտայայտութիւն մը չունի. հմտ. Friederich 1344:  
<sup>151</sup> Անդ:  
<sup>152</sup> Արեւելքի այս երկու նշանաւոր կուսակալներու մասին հմտ. Գլ. Գ, յօդ. 1 եւ 2:  
<sup>153</sup> Տես վերը Գլ. Գ, յօդ. 2 եւ 3:  
<sup>154</sup> Հմտ. վերը յօդ. 2. իր մասին PIR, III, 30: